

ՀԱՅ

4'2003

ԱԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԱՆԴԱՆ

ԵՐԵՎԱՆ



Հիմնադիր եւ հրատարակիչ
«Սոմիկ» հայ ծավալութիւն կենտրոն,
«Յոր արվեստ» ՍՊԸ

Համարակալում է գիտական համագործակցությամբ
Մերության Սահմանադրությամբ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և պատմության ինստիտուտի
ՀՀ ԳԱԱ Արևելահայության ինստիտուտի
Հայաստանի ազգային դատարանականի

Գլխավոր խմբագիր
Կարեն ՄԱՐԵՒՇՅԱՆ

Գործադիր քնօրեն
Դամիկ ԳԻՆՈՅԱՆ

Պատասխանատու Դարձույթա
Նորայր ՎԱՐԴԱՅԱՆ

Համակարգչային ծեռավորության
Կառուն Դավիթյան

Աշխատակազմ
Լիլի Գաստարյան, Աննել Ամիրյանյան


Խմբագրական խորհուրդ
Կառաջարան ՀԱՅՈՒՅՈՒՆԱՆ, Հակեն ԽԱԶԱՏՐՅԱՆ,
Սուտառ ԳԱՄԱՅՅԱՆ, Սարգիս ՄԻՋԱՅՅԱՆ,
Կառուն ՎԱՐԴԱՅԱՆ, Դամիկ ԵՐԱՌԻՔ

Լուսանկարիչ
Գևորգ Գաստարյան

Գրանցման վկայակամ՝ 01Մ000095
Դաշիչ՝ 77789
Ստորագրած է տպագրության 01.12.2003

Խմբագրության հասցեն
Երևան, Դամադեռնության 32
Դեղախոս՝ (374 1) 52 35 01, բջջ. (374 9) 40 32 15
Ֆաք.՝ (374 1) 563661
E-mail: hayart02@hotmail.com
http://users.netsys.am/momik

Նյութերը տպագրվել են արեւելահայերենով և
արմանականով, բազի ուղղագործական:
Դրույթամբ արտահայտված կարծիքները կարող են չհամընկել
խմբագրության տեսակին:
Գովազդի բովանդակության դատախամառուն գովազդառուն՝
Արտադրություն կատարելիս հոլով «Հայ արվեստ» դարաշարի է:



Համական առաջն էջին
Մինաս Ավետիսյան,
Մայություն, 1972 թ.

Բ Ո Կ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

3.... Խմբագրական

4.... Պողոս Հայրապետ, Մինասը եւ իր ժամանակը



13.... Սամվել Խալաթյան, Միրված դերասանութիւն՝
Կարողի Վարդենեսան

14.... Դարցագույց Վարդամ Պետրոսյանի հետ

15.... Նոր Զուրայի 400-ամյակը

17.... Արի Ֆիշենկինան, Արտևսին ընծայուած
կեամբ ճորժ Ամողամբան

19



Մեկ հարց Վահե Դավթյանին....

20.... Մարինա Մետեմանյան, Փարավոն Միրզոյան

23.... Պատմում է Վարուժան Սալաթյանը

24.... Եղուաղ Արացյան



25.... Ուուրեն
Նահատակյան,
Դավիթյան
գունադիմակ
Վահարամուն

26.... Մովսես Դերեյեան, Ուուրեն Նահեան

32.... Հայաստանի գրկանուր Բուղարիայում

33.... Նիկոլ Աղարայյան

34.... Սահարակ Գևորգյան

35.... Եղիշ Նահիդ Գործակալությունը

Սամվել Շահինյան, Ովստուակումի ավագանի
Ժայռակիր բարձրագույնը....

36.... Աննիիս Արփեն, Լեւոն Խահակյան

39.... Նահին Թուլսիկյան,
Կերպարանակիության վարութե՛ց՝
Հայի Կորդեւեյան

40.... Տամար Թամարիյան, Արշակ Մանույանի
ստեղծագործական աշխարհը



41.... Աղարեկյան Էլիյթ, Հայկական գոտիների
դատմությունից

14, 18-19, 25,
27, 28-29, 38, 42.... Մասական կամ, լուսեր

«ՀԱՍՄԱՅՎԱԿԱՆ» ԵՒ ՅՈՒԺԵԼՅԱՆԱԿԱՆ

Հայաստանի ժողովուրդը, որն այս տարիվա առաջին կեսն անցկացրեց ծանրագույն ընտրությունների թուր ու բոչի մեջ, երկրորդ կիսամյակին ականատեսելու է զարգել Համահայկական եւ Հորեցյանական կամ մի շարք միջոցառումների: Նախ Համահայկականները՝ սպորտային խաղեր, երիտասարդական ամառային Հավաք, բժիշկների Համաժողով, Հայագիտական գիտաժողով, տնտեսական Համաժողով, լրատվամիջոցների Համաժողով: Ինչ խոր, որ գաղափարը լավ է, մանավանդ Հայաստան-Սփյուռք կապերն ամրացնելու համար, սակայն իրականացումը շատ Հարցերում թերի էր (չմանրամասնենք):

Այս տարիվա բաղմաթիվ Հորեցյաններից զիսավորներն են էջմիածնի Մայր տաճարի Հիմնադրման 1700-ամյակը, Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյանի» 1000-ամյակը, Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակը: Բողոքն էլ փառապանծ տարելիցներ՝ Հայերի ազգային արժանապատվությունը: Բայց այսուղ եւս, բուն Հորեցյանի փաստից բացի, կարեւոր է այն նշելու կերպը, ընդգրկումը, ժողովրդության գումարը և այլն միջոցառումներ, որովհետեւ Հոգեւաս պատրաստ չենք դրանց: Գուցե Համամատությունն այնքան էլ տեղին չէ, բայց Հիշենք Թումանյանի ու Կոմիտասի ծննդյան 100-ամյակները, Մեծ եղեռնի 50-ամյակը, Երերունի-Երեւանի 2750-ամյակը:

Ժամանակ առ ժամանակ մամուլում նշվում է, թե պատշաճ ձեւով չենք նշում այս կամ այն Հորեցյանը (բերգում են կազմակերպչական եւ զանազան այլ պատճառուներ): Սակայն իրականությունն այն է, որ այսօր մենք անգամ մեծ ցանկության դեպքում չենք կարող ազգովին իրականացնել թե՛ Համահայկական, թե՛ Հորեցյանական միջոցառումներ, որովհետեւ Հոգեւաս պատրաստ չենք դրանց: Գուցե Համամատությունն այնքան էլ տեղին չէ, բայց Հիշենք Թումանյանի ու Կոմիտասի ծննդյան 100-ամյակները, Մեծ եղեռնի 50-ամյակը, Երերունի-Երեւանի 2750-ամյակը:


Այսօր սոցիալական ու կենցաղային դժվարությունների բեռի տակ կրած, Հարթակյան Հերթական Հավելումներին ու թանկացումներին սպասող, զանազան մեծ ու փոքր Հարցերում արդարություն կամ գոնե Հոգեւոր սատար ու միսիթարություն փնտրող, բայց չգտնող ժողովրդին անհնար է ոգեւորել ոչ Համահայկական միջոցառումներով և ոչ էլ Հորեցյաններով:

Իսկ մշակոյթին առավել քան զգայուն ողորտ է և չի կարող մշտական բարձրության վրա մնալ սոսկ մի խումբ նիւրբյանների ջանքերի շնորհիվ: Սա այն ողորտն է, որը կախում ունի ե՛ւ երկրի տնտեսական ու սոցիալական իրավիճակից, ե՛ւ մեծավ մասամբ նաև Հասարակության մեջ տիրող բարոյահոգերանական միջոցառումներով և ոչ էլ Հորեցյաններով: Իսկ մշակոյթին առավել քան զգայուն ողորտ է և չի կարող մշտական բարձրության վրա մնալ սոսկ մի խումբ նիւրբյանների ջանքերի շնորհիվ: Կունենանք բարենպահ վիճակ, վստահություն՝ ապագայի նկատմամբ, այն ժամանակ անգամ ամենափոքր թվաքանակ տոնն կդառնա, և ամեն մի նման տոնն կդառնա իսկապես Համահայկական:



ման ճանապարհով ընթացող նկարիչը ոչ միայն չի դասաճանաւում իր Հիմնական սկզբունքներին, այլև ամրողականության մեջ հասնում է էպիկական հաշեղության, գունապատճենականության դիմամիկ հարաբերությունները ձեռք են բերում քանակակային ամրություն։ Քանի գնում սրվում է նկարի ողեղեն պարունակությունը, գեղջկական միջավայրի ներքին ու արտաքին պատկերությունները ձեռք են բերում քրիստոնեական առակի ու ասացվածքի բաղմանաստություն։ Դրամատիկ շեշտերով հավեցած նկարային մակերեսների լուսային ցողացումները հանդես են գայլա նոր լուծումներով՝ միատարր, կտրտված, հատվածային ներթափանցումներով։ Ռեալ իրականության պատկերային վերակերպարփորումները դիմական խորհուրդ են ձեռք բերում, գառնում են նշանային գումարելիների իրական և ֆանտաստիկ արձագանքներ («Ամոմակարով կինը», 1969, «Այսուղ մենք ապրել ենք», 1970, «Ամուացված ծայրանաս», 1970, «Գյուղի ծայրանաս», 1970, «Անհանգիստ օր», 1970, «Գրքով աղջկը», 1970, «Միայնություն», 1971, «Բորդ մանողը», 1971, «Արվեստանոցի անկյուն», 1971)։

Մենք արդեն ակնարկել էինք 20-րդ դարի գեղանկարչության ողբագույն ուղղությունների հետ շփման եղբեր ունենալու Մինասի հակումների մասին, սակայն այդ կոնտեքստում նրա հոգեհարազատությունը հայ մանրանկարչությանը և որմնանկարչությանը (Հատկապես Վասպորականի) այնքան է օրգանական և միաժամանակ ուսանելի, որ թմբում է, այդ արյունակցական կապը ստեղծվել է բնա-



Խաչելոբյուն (Նվիրված մոռը), 1969թ.

կան ճանապարհով, առանց ճիզի և մտային լարումների։ Երրեմն ուղղակի (Հորինվածքային սխեմաների և տարրեր կերպարների համանանություն), միջնորդավորված (ակնարկների ձևով), սակայն հիմնականում ստեղծագործական ողորումները (լոկա գունամակերեսների, պարզեցված գծանկարի ընդհանրական կերպավորմամբ) առավել առաջնային են, Մինասի վերոնշյալ Հատկանիշները «տեսնում» է հոգու աչքերով, Հարազատի երկուղածությամբ, աշխարհի պաշտամունքով։ «Թորու Ռոսինի ծնունդը» (1965), «Ամսուշի վիշտը» (1967), «Ջաջուոյան աշուն. խնոցի» (1972), Լենինականում ստեղծած (1972, «Գորգագործներ», «Աղջկը խաչքարի մոտ», «Մանկություն») և Հետապայի որմնանկարները ունենալով մինապան գեղանկարչության ազատությունն ու պատկան, որոշակի առնչություններ ունեն որմնանկարչության և մանրանկարչության հայկական ավանդությունների հետ և փայլուն օրինակներ կարող են հանդիսանալ ժամանակների ու ձևերի փոխներթափանցման, օրգանական յուրացման և այն նոր որակի հացնելու գործընթացում։ Նման օրինակները բազմաթիվ են։

Մինչև 1972-ը և հետո Երևանում և Գյումրիում ստեղծած որմնանկարներն ու բնմանկարչական աշխատանքները այդ բնագավառի նվաճումներն են մեզանում և կազմում են նկարչի ստեղծագործական համայն պատկերի կարևոր հանդույսները։ Բնմանկարչական հանրահայտ աշխատանքներով նա ապացուցեց բնմական տարածքի և գրական հմքի գեղանկարչական կաղմակերպման բարձր կուտուրա։ Մեր նպատակը չէ դրանք այսուղ առանձին քննարկել, քանի որ այդ բարձր նվաճումները առանձին ուսումնասիրման են արժանի։

Մինասը շրջապատված էր լավ և հուսալի ընկերներով, համակիրներով, ստեղծել էր հրաշալի ընտանիք՝ իր ծնողական դաստիարակության հանգի։ Սակայն երրեմն նրա շորջը կատարվում էին անակնկալ արարտներ, որոնք կամ հասկանալի չէին, կամ էլ ենթադրաբար ինչ-ինչ մղումների էին վերագրվում։ Անհանգանալի կոտրվում էին արվեստանոցի ապակիները, և ոչ որ տրամարանորեն չէր կարող ասել, թե դա ինչ է նշանակում։ Խակ ինքը նորը, վերին աստիճանի դպայուն էր, որքան ուժեղ և բարեհոգի, նոյնքան էլ ներքուստ փիսրուն։ Եվ երբ կատարվեց հրեշտավոր, այն չարարաստիկ նոր տարիվա առավոտյան (1972) հիմնավորապես այրվեց Մինասի տարիների վաստակը, նրա ընկերները պարզապես պապանձել էին տեսարանից, նրա հետ պատահած ողբերգությունից։ Մարդը երանելի արարչական վերելքի մեջ էր, կաթիղ-կաթիղ ստեղծածը հավաքել էր Փարիզում կաղմակերպվող ցուցահանդեսին ներկայանալու և այժմ կանգնած էր իր գրեթե ողջ ստեղծագործության մոխիրների վրա։ Ոչ որ նրան սփոփել չէր կարող, չնայած շատ ու շատ ընկերներ երբեմն փորձում էին ինչ-որ անկապ խոսքերով միսիթարել։ Սակայն տեսնել էր պես մեծ նկարչի պահպաժքը՝ ներքուստ մտամոլոր, մի քիչ կորացած, սակայն արժանապատվությամբ, առանց արտաքին ցուցադրանքի։ Եվ հետապայում, երբ ամիսներ անց առաջին անգամ դեպքից հետո դրուցում էինք նկարչի հետ, միայն իմաստունք, առարյալը, տեսանողը կարող էր այդպես մտուրել, ինչ գնուվ էլ լինի ետ բերել անհետ կորածը։

Ասում են՝ Աստված րոլոր դռները միաժամանակ չի

Հայունակություն՝ էջ 30

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍԻՅԱՆ



Փածաղկով իմբսանկար, 1967



Բաց ուսուհան, 1969



Հանգստացողը, 1972

Արմեն

"YERKIR NAIRI" offers
 Historical tours
 Archeological tours
 Ethnographic tours
 Bird-watching tours
 Adventurous tours
 Youth tours
 Hotel reservation
 Guide service
 Transport service



YERKIR NAIRI

TRAVEL AGENCY

1/3, Tamanyan street,
 Yerevan 375019,
 Republic of Armenia
 Tel.: (374 1) 58 23 39
 Fax: (374 1) 58 61 18
 E-mail: yen@yentravel.am
www.yentravel.am



ՀԱՅՎԱՐԴԱՐԱԿԱՆ ՌԱՋԱԿԱՆ ՌԱԴԻ ՏՐԱՎԵՐՏԻՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ TACIS ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ
 ԿԱՇՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՋԱԿԱՆ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ # 061)

ԿԵՆՏՐՈՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

- ՍԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ «Հաշվադահական հաշվառում եւ առլիի» մասնագիտությամբ,
- Հաշվադահական հաշվառման դասընթացներ սկսնակների համար,
- Վերադարձածման դասընթացներ գործող հաշվադահների համար՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հաշվադահների լիցենզավորման բնության ծրագրով,
- Աշխատանքի տեղավորման գործակալություն:

Տեղեկությունների համար դիմել՝ Երեան, Զարենցի 1, 9-րդ հարկ

Հեռ.՝ 575940, 575238 • Ֆաք.՝ 574579

"YERKIR NAIRI" guarantees
 a warm welcome,
 quality service
 and unforgettable
 impressions.

Եր արվեստագետի ընատուր ընդունակությունները համրնկնում են ճակատագրի նպատակապաց ուղղորդումներին, ծնվում են անհատներ, որոնք իրենց գործունեության ծրագրի խորհրդանշում են ժամանակին ու ժամանակների ոգեղեն կապը: Այդպիսիներից է Վարդուհի Վարդերեսյանը: Աղջակա էր, երբ ընտանիքը Բոխարեստից Հայրենակարգեց և ընակություն հաստատեց Անինականում (Գյումրի): Թատրոնի նկատմամբ ունեցած անհագուրդ մեր Վարդուհուն մղեց տնիի դրամատիկական թատրոն, որին կից գործող ստուդիայում սովորելուն զուգընթաց՝ նրան վաստացեցին փորբեկ գերեզ: Շատ չանցած, ի դեմ Վարդուհի Վարդերեսյանի, թատրոնն արդեն ուներ դրամատիկական կերպարների յուրօրինակ մեկնարանող, Հռվերանական բազմաշերտ ապրումներ երևակող դերասանություն:

1950 թ. Ալ Շիրվանդաղեի «Պատոի Համար» դրամայում Վ. Վարդերեսյանի մարմնավորած Մարգարիտի կերպարը երևույթ գարձավ ժամանակի Հայ թատերաշխարհում: Թատերագետները շտապեցին դիտելու նոր աստղի ծնունդը: Դիտեցին ու խոստովանեցին, որ արվեստի երկնակամարտում խակական աստղերն աստիճանական արարում չեն ունենում, փայլատակում են միան-

Վարդուհի Վարդերեսյան

Հոգական հարուստ եղելէ ջները, հումորի նրբին դպացողություններ, արտահայտիչ դիմախաղն ու «գերասամական վեցերորդ զգայարանի», խաղընկերային պահերի բմրոնումը այն բաղադրիչներն են, որոնց Համադրությամբ են մարմնավորվել բեմում՝ Անուշը (Հ. Պարոնյան, «Պատուասար աղբար»), կինոյում և հեռուստաֆիլմերում՝ Փեփրոն («Միջնորդ տեր պապան»), Թագուհին («Վարդիկներ»), Սաթենը («Թագականին կնիկը»):

1958-ին դերասանունին Հրավիրվում է Երևան՝ Գ. Սունդուկյանի անվան մայր թատրոն: Մինանց են Հաջորդում դրամատիկական ապրումների, ներքին խոռվիքի և ընդգման, նաև՝ աղնիվ Հերոսականությամբ Հազեցած կերպարների դերակատարումները, ինչպիսիք էին՝ Նուարը (Ն. Զարյան, «Արա Գեղեցիկ»), Հուղիթը (Գուցկով, «Ուրիշ Ակոստա»), Էլիզարեթ Պրոկոստը (Միլիեր, «Սալեմի վուկները»), Կեկելը (Գ. Սունդուկյան, «Պիտո»), իսկ Վ. Սարդյանի «Խմ սիրո լեռներում է» դրամայում Վարդերեսյանի Զոնիի դերակատարումը գարձավ Հայ դերասանական արևելքահայ բեմ բերեց այդօրինակ կանանց կերպարների խոսքի արտահայտչանության մի նոր, առանձնահատուկ բարձրարվեստ մշակույթ և ոճ: Որպես խաղընկերներ ունենալով այսպիսի տիտանների, ինչպիսիք էին Վահրամ Փափազյանը, Հրայր Ներսիսյանը, Արման Կոթիկյանը և այլք, արտիստուհին ատեղծեց բեմական արևելտահայերենի անգերազանցելի որակ:

2003 թիվը արտիստուհու Համար Հորեցանական է: Նա, որ բազմաթիվ տոներ է նվիրել մեզ, այսօր իր վաստակաշատ բարձունքից Հառնում է յոթուկես տամասայի աղնավական Հմայրու:

1965-ից (որն, ի դեպ, նրա կյանքում նշանավորվեց ՀՍՍՀ ժող. արտիստուհու կոչման շնորհումով), արտիստուհին Հանդես է գալիք նաև կինոյում (Մարգարիտ, «Պատոի Համար», Մարիամ, «Ամոր սիրտը» և այլն):

Վ. Վարդերեսյանը Հայտնի է նաև կոմիկական դերակատարումներով: Կերպարկերումն խնդիրների անսալի բացահայտում, նրա իսկարկուն ոճը, խոսքի

Սամվել Խաչատրյան



Յարայիշի Միջնական

գեղանկարչություն

կերտմանը, ինչը զումարվում է նրա անվրեպ գեղանկարչական ընադրին և բանաստեղծական նուրբ զգացողությանը: Այդ հատկանիշներն են, որ նրան թույլ են տալիս չխախտելով ժամանակի սահմանները, բնականության, անկաշկանդության և ազատության համեմ դրանցից յուրաքանչյուրում: Այդ բնականությունն արտահայտվում է թեթեւակի շեղումների մեջ, որոնք նրա աշխատանքներին երբեմն անկայուն հավասարակշռություն են հաղորդում: Աշա նրա աշխատանքների խակական բովանդակությունը՝ կյանքի շարժունություն, որ երբեք չի կորցնում իր վեհ և հուզիչ խնասոր:

Յուրաքանչյուր աշխատանքի ներքին էությունն արտահայտելու համար նկարիչն ամենասին կարիք չունի դիմելու շիճու խորհրդավորության, երեւոյթների արտաքին կաղապարը քանդելու: Նա պատմում է խակական մարդկային երջանկության թեկուղ հաղվագյուտ, բայց կայծակի փայլատակման պես վառ դրսերումների մասին:

Նկարիչը համառորեն ներշնչում է դիտողին, թե որքան էլ անրարենպաստ ընթացք ունենա մարդկային գոյությունն այս քառային կյանքում, միշտ հնարավոր է գտնել լույս, ջերմություն, քնչշություն... Այստեղ է բացահայտվում Միքողյանի բացառիկ կարողությունը՝ չպարտադրելով, սակայն հաստատակամորեն, իր կուպիսներում ընդգծել, որ կյաքք գեղեցիկ է: Նրա արվեստը զուրա չի գալիս կենցաղային մոտիվների սահմաններից, բայց շեշտադրումներն ավելի բարձր որորտներից են: Նրա արծարձած թեմաները երբեք չեն թիվում պարզունակ, հանրահայտ ճշմարտություններ: Կենցաղային տեսարաններ՝ տան պատերից ներս, ընության մեջ, սովորական նատյուրմորտներ, ծանրթ ընապատկերներ, - բոլոր աշխատանքներում կա արտաքին ձևով չսահմանափակվող ինչ որ բան: Նա վերաբռնություն է կյանքը՝ կարծես այն որակով ողի մեջ, ազատագրելով ունայնությունից ու խառնաշփոթից, կենցաղային աղբից ու բզկտող հակասություններից, թողնելով միայն անհրաժեշտը: Ամենասովորական երեւոյթները նրա վրձինը պատկերում է այնպես, որ յուրաքանչյուրը շողողում է, լուսարձակում, մեր ուշադրությունը զրավում ինչ-որ աննկարագրելի փայլատակումներով: Նա ունի մշակված միջոցներ, միայն իրեն բնորոշ ձևուագիր, որ սակայն, երբեմն կարելի է գտնել նրա աշակերտների մոտ, ինչն անխոսակելի է, քանի որ դժմար է չենթարկվել նրա նկարչության հմայրին:

Միքողյանի ոճը զուտ գեղանկարչական է: Գծից առավել նա արտահայտչականությունը փնտրում է գոյնի մեջ: Նրա վրձնահարվածը՝ զորեղ, պոռիթկուն, ինքնավստահ, տողորպած է ներքին ուժով: Նկարիչն այն կիրառում է հպան զանազան ուժգնությամբ, այլևսայլ ուղղություններով, գունային ու տոնային պես պիտույքամբ:

Փարավոն Միքողյանի ստեղծագործությունը խոսում է կյանքի մասին, որ մեր կողքին է, որի իմաստը, սակայն, մենք երբեմն չենք գտնում: Նրա աշխատանքները հակաթույն են աշխարհամերժման դեմ, աշխարհ, ուր բոլորի համար բավականաչափ տրտմություն, աղետներ ու քառի կա... ու իս լայն իմաստով), կուռ կոմպոզիցիաների

Մարինա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՓԱՐԱՎՈՆ ՄԻՔՈՂՅԱՆ

Մտղում



Նայութեանուն



Պատճամքուա



Բարի լուս



Մեր հայութի տոնը
1700-ամյա Լուսավորչութիւն

ՍՈՒՐԵ ՀՂԱՄԻՉՈՒ

Այս նվիրական եկեղեցու

հովանու ներքո

5-րդ դարի սկզբին

Ս. Սահակ Պարթե

Կաթողիկոսի եւ

Ս. Մեսոնց Մատոց

Վարդապետի ձեռամբ

իիմնվեց առաջին

հայագիր ԴՊՐՈՅԸ

եւ առաջին հայագիր

ՄԱՏԵՆԱՐԱՆԸ:

Դեմք այդ

Մատենադարանի

շարունակությունն ու


ժառանգորդն է

ներկայիս Երեւանի

ՄԵՍՐՈՒ ՄԱՇՏՈՅԻ

ԱՆՎԱՆ

ՄԱՏԵՆԱՐԱՆԸ:



ՊԼԱՏՈՆ Է ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԱՐՁԱՆԸ



ես, որ մասնագիտությամբ ճարտարագետ ճարտարապետ եմ (իմ նախագծով է կառուցվել Հայեափ Ս. Գևորգ եկեղեցին), մտածեցի իմ փոքր ավանդոր թերել Մատենադարանին: Այնպիս ստացվեց, որ ձեռք թերեցի շորջ 150 ձեռագիր (արարական, ասորական եւ այլ) և որոշեցի ամրություն ուղարկել Մատենադարան: 1964-ին այդ անելոր հետ չէր: Երկար ճանապարհ՝ անցնելով, երկու խոշոր արկերով ձեռագրերը հասան երեւան, և և Մատենադարանի այն ժամանակից տօնօրն Աւան Խաչիլյանից հետագիր ստացա, որ ամրություն անմնաս կերպով տեղ է հասել: Այդ ժամանակից սկսած իմ կապերը սկսեցին զարգանալ Մատենադարանի հետ: Ամեն անգամ, որ առիթ էի ունենամ ձեռագիր ձեռք թերել, ուղարկում էի երեւան:

Մի անգամ նոր Դելիի թաղամասերից մեկում արարական հին ձեռագրեր գտա, որոնք վաճառողը զվատեր ինչ ենցվուի են: Դրանք նոյնպիս այժմ Մատենադարանում են: Այսպիս կամաց-կամաց ավելացան, և այժմ Մատենադարանին իմ նվիրաբերած ձեռագրերի թիվը կարծեմ Հասան 210-ի: Վերջինը հենց Մատենադարանի ցուցումով ձեռք թերեցի՝ 1260-ական թվականների կիրիլյան չրել մի Ավետարան:

Իմ վրա մեծ տպավորություն են թողել Հանգուցյալ Աւան Խաչիլյանը, Մատենադարանի ավագ սերնդի գիտնականները, Սևն Արևշատյանը, որոնք յանձ կապեցին Մատենադարանի հետ:

Այս գործունեաթյունը սկսելով 1960-ական թվականներին, ծրագրեցի առեղծել Մատենադարանի բարեկամների մի միություն, որ պիտի ընդգրկվին նաև օտարներ. մեծ մտավորականներ, անդաման չէ, որ դրան Հավաքերու համար: Դա շատ կարեւոր էր այն ժամանակ, կարեւոր էն անեւ հիմ: Կազմակերպչական բարվական աշխատանք արվեց, Հայաստանի իշխանությունները Համաձայնություն տվեցին, Հետոն Խաչիլյանը գրեց առաջին «կոչը», Վաղգեն կաթողիկոսը Հանձն առավ յինել պատուի նախագահ: Ֆրանսիացի Հայագետ Ֆեղդին կազմակերպության կանոնադրությունը Համապատասխանեցրեց Ֆրանսիայի օրենքներին, քանի որ կենտրոնը պիտի Փարիզում իւներ: Ես այն ժամանակ Վիեննայում էի: Փարիզում անհրաժեշտ էր ունենալ Համակարգող, որպիսին դարձավ Կարֆկ Պատմանցանը: Սակայն, ցափոք, ինչ-ինչ պատճառներով միության ստեղծման գործն անապարտ մնաց, թեև բարվական Հայունի մարդիկ անդամանացնեցին Համաձայնություն էին տվել:

Երկրորդ փորձը արվեց Հայաստանի անկախացումից հետո՝ 1990-ական թվականների սկզբին, որը նոյնպիս հաջողությամբ չպահպից:

Բարեբախտաբար վերջապես կանոն առավ այդ զաղափարը, մի փոքր այլ ձեռնորդությունն էր, և հորս պատգամն էր գործնականությունը հայության օգտակար յինել Հայենիքին: Այն ժամանակ մեզ Համար Հայաստանի խորհրդանշներն էին Սուրբ Էջմիածինը, Մատենադարանը, Ակադեմիան:

Պետք է բոլոր միջոցներով նեցուկ կանոնել այս գործին: Մադմում եմ, որ այս հիմնադրամը զարգանա իշան մեր մշակույթի:

ՄԱՏԵՆԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՑ

Դայի համարը _____

Անուն _____

Ազգանուն _____

Հասցե _____

Հեռ. _____

Ֆաս _____

Էլ. փոստ _____

Մատենադարանի բարեկամներ բարեգործական հիմնադրամի մասնակցելու նույնագույնը

100 ր.

Կատարում եմ (գոմար/հարադրամադ տաերու)

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱԿՈՒՆԵՐԸ

ՄԲԲԴ-ի նվիրատուներ անվան սամում են՝
• Հիմնադրամի գործունեության մասին տեղեկագիր

Ըստ ցանկության դառնում են՝
• Հիմնադրամի հրատարակ մատենաւերին որևէ մեկի բաժանորդ, հանդիսակուր միջոցառումների հրավիրայա:

Մասնակցության դառնում
• Լրատվական միջոցներով (հեռուստաեռություն եւ մամուլով),
• www.matenadararan.am լրացնական հանդիպության համար կազմակերպություն,

9. Համարակական ծրագիր
10. Կանակառուց մասնաւենի դիմարարություն
11. Այլ ծրագրեր

ՆԵՐ ՋԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՅՑ

Հիմնադրամի մասնակիցներ իրավունք ունեն սահմանադրության մասին:
ՊԱՍՏԵՆԱՐԱՆԸ ՄԲԲԴ-ի ՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԵՐԸ


Հասցեն՝ Մատոցի 53, Մատենադարան, Երեւան-09, Հայաստան: Հեռ./ֆաս. (3741) 520-420: E-mail: friends@matenadararan.am: URL: <http://www.matenadararan.am>

Հասցեն՝ Մատոցի 53, Մատենադարան, Երեւան-09, Հայաստան: Հեռ./ֆաս. (3741) 520-420: E-mail: friends@matenadararan.am: URL: <http://www.matenadararan.am>

ԷԴՈՒԱՐԴ ԱԲՐԱԶՅԱՆ



Կանտի



Մարիան



Գողացված մերկուրյուն



Սլաշին



Թայուառական



ԷԴՈՒԱՐԴ ԱԲՐԱՅԱՆ

Տոկտումը 31-ին նկարչի
տանը բացվեց գեղանկարի
Էղուարդ Աբրազյանի անհատ-
կան ցուցահանդեսը:

- 1941 - Ծնվել է Գյումրիում
- 1955 - Ավարտել է Մերկուրյուլի
անվան նկարչական դպրոցը
- 1963 - Փանոս Խերթմեջյանի
անվան գեղարվեսի
ուսումնարանը
- 1969 - Երևանի գեղարվեսա-
քանական ինսիտուտը
- 1974 - Հայաստանի նկարիչների
միուրյան անդամ
- 1999 - Կերպարվեսի միջազգային
ասոցիացիայի անդամ
(ՅՈՒՆԵՍԿՕ)
- 2001 - Կանադայի որոքեսինսալ
դիմանկարիչների ասոցիացիայի
անդամ

Ցուցահանդեսներ

- 1970 - Հանրապետական,
միուրենական եւ արտասահմանյան
ցուցահանդեսներ
- 1975-86 - Գերմանիայում եւ Կուբայում
կազմակերպված ստեղծագործական
հավամեր
- 1976 - Հայ նկարիչների ցուցահանդես,
Բուլղարիա
- 1980 - «Օլիմպիադա-80», Մոսկվա
- 1983 - «Հայկական գույներ»,
Կանադա-ԱՄՆ
- 1983 - Հայ նկարիչների ցուցահանդես,
Անգլիա
- 1983 - «Հայկական գույներ»,
Ֆինլանդիա, Տամբեռ
- 1996 - Անհատական ցուցահանդես
ԱՄՆ-ի դեսլամատանը Երևանում
- 2001 - Դամեն եւ Հայաստանը
Ռուսա-Իտալիա
- 2001 - Հայաստանում Իհրանոներյան
հոչական 1700-ամյակին նվիրված
ցուցահանդես Երևանում
- 2003 - Անհատական ցուցահանդես,
Երևան



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒԱԼՊՈՆՎԿ...

Օրինակի հայ նկարիչների
շարքում ուրույն տեղ ու-
նի Սեյրան Սերգեյի Մի-

կոյանցը: Նրա պատրի՝ Դուկասը, ծա-
գումով Զավախիքի Վաշին գյուղից

էր, ժամանակին եղել է զորագար Անդրանիկի առաջին կամագորական ջոկա-
տի սերժանտ:

Բնությունից շոայորեն օժտված Սեյրանը ոգենչների է Հայրենի Զավախ-
իքի հերիաժմային գոյներուով. Հին թիֆլիսի Հայաշոնչ թաղամասերի գողտրիկ
ընապատկերներուով:

Հետարրբական է, որ ապագա նկարիչը (ծն. 1964 թ.) առաջին անգամ
սկսել է նկարել՝ զարդանկարներ պատկերելով թաշկինակների վրա... Միջա-
կարգ դպրոցի նկարչության ուսուցիչը նկատում է օժտված պատանուն և
նրա հոգում սեր պատվաստում արվեստի նկատմամբ:

Սեյրանը, որը վրացական շրջանակներում հայտնի էր թենգիդ անվամբ,
1989-1996 թթ. սովորում է Թիֆլիսի գեղարվեստի ակադեմիայի դիդախի
բաժնում: Կարճ ժամանակում նկա-
րիչը մեծ հեղինակություն է ձևոր բե-
րում:

1991-ին Հարավկորեական
«LG» փիլման 1991-ին Հայտարա-
րել էր կենցաղային տեխնիկայի դի-
զայնի Համաշխարհային մրցույթ,
որին մասնակցել է նաև Սեյրանը,
ներկայացնելով երաժշտական կեն-
տրոնի, հեռուստացույցի, Հեռախոսի
և այլ տեխնիկայի ինքնատիպ ձևա-
փորումներ, որոնք արժանացել են
Հավանության: Ցավոր, մրցույթի
վրացի կազմակերպիչները հեղինա-
կին չեն տեղեկացնում անհրաժեշտ



բոլոր պայմանների մասին (մակետ-
ների պարտադիր լինելու մասին), որի
հետևանքով նա գրկվում է մեծ մր-
ցանակից և միայն ստանում չնորհա-
կալագիր:

Այսօր նկարիչը շարունակում է
ստեղծագործել ե՛ւ որպես գեղանկա-
րիչ, ե՛ւ որպես դիդախներ: Գեղան-
կարչության մեջ աշխատում է մաս-
տեխնիկով: Միկոյանցի կտամները
շատ սիրված են Թիֆլիսիում: Դրանց
մի մասը տեղ է գտնել տարրեր թան-
գարանների ու մասնավոր անձանց
Հավաքածուներում:

Ուրբեն ՆԱՐԱՍԱԿՅԱՆ

ԾՈՒՅԱԱՆԵՍԱՅԻՆ

Անցած ամիսներին Հայաստանում եւ արտասահմանում հայ արվեսի տասնյակ ցուցահանդեսներ են բացվել: Դամառական անդրադարձնում են մի խանիսին:

Սարյանական «Իրավառություն» Անթիբում

Դումիսի 27-ից հոկտեմբերի 5-ը Ֆրանսիայի Լազուրյան ափի Անթիբ թաղալում գտնվող Պիկասոյի թանգարանում կայացած Սարյան Սարյանի ցուցահանդեսը: Նկարչի տուն թանգարանի (ցուցահանդեսի նախածեռնողը), Հայաստանի ազգային դասկերասրահի, Մովկայի և Սամկե Պետքրուցի թանգարանների հավաքածուից կազմված եւ հիմնականու Սարյանի վաղ շրջանի աշխատանքներն ընդգրկող ցուցադրությունը բազմաթիվ ֆրանսիացիների եւ գրուաշջության կենտրոն հանդիսացող բաղադրի հյուսերին ներկայացրեց հայ մեծ նկարչի գունական աշխարհը, որը ցատերի համար հայտնություն էր: Ֆրանսիական մանուկն այս նախին բազմաթիվ հրատարակումներ են ունեցել:

Դիմանկար

Դումեմբերի 24-ին «Մկրտչյան» դասկերասրահում բացվեց դիմանկարչությանը նվիրված իննամյա ցուցահանդես, որն ընդգրկում էր հայ դասական եւ արդի նկարչների տուր վեց տասնյակ արժեքավոր սեղծագործություններ: Ե. Գայֆեճյանի հմտուն կազմած ցուցադրությունը տեղ է եղած գտել Արմեն Մկրտչյանի եւ այլ մասնավոր հավաքածուների գործեր:

Ահոա Շովիաննիսյանի ցուցահանդեսը

Ժողովրդական արվեսի թանգարանում հուլիսի 10-ին կայացավ նկարչուհի Ահոա Շովիաննիսյանի առաջին անհատական ցուցահանդեսը: Ներկայացված էին ավելի քան 50 դիմանկարներ, բնանկարներ, աստվածաշնչան թեմաներով դասկերներ, մանրանկարներ, նկարազարդ կուտիկներ:

Դրաժետ կայսրություն

ՀՀ կառավարության որոշմամբ Ռուսաստանին է Հանձնվել Հայաստանի Ազգային պատկերասրահի ներկայականությունը Հանդիսացող Եկատերինա Բ-ի մարմարյա մեծադիր արձանը (գործ՝ Ա. Օսկեկուշինի): Քանդակը 1952 թ. թանգարանին էր նվիրել քանդակագործ Ս. Մերկուրովը: Խորհրդային իշխանության կողմից արձանը Մերկուրովին էր Հանձնվել որպես աշխատանքային Հումք (մարմարի բեկոր), եւ արմեստագույքը, քանդակը նվիրելով մեր պատկերասրահն, փաստորներ փրկել էր կորստից:



Տոն Կուռում



Շուրջ 1700-տարի առաջ Արագածոտնի Կոշ (Կուչ) ավանում է բնակիլ գաւից Հնագացած Արշակունի Տիրան թագավորը: Հսու Մովսես Խորենացու, նա պատեղ է կանչել իր թոռանը՝ Գնելին, պատմիքելով բնակիլ իր մոտ: Հենց Կոշում էլ տեղի է ունեցել Գնելի ու Փատունձեմի (ապագա Հայոց թագուհու) Հարսանիքը:

Չներ անդրադարձնում Հնագացած գեպերին, որոնք քաջածանոթ են Հայոց պատմությանը ու պատմավեպերով Հետարքրդողներին, սակայն պատմական այս դրվագն ու Հայունի գյուղի մասնանդարձական առաջին Հիշատակությունը առիթ էին Համբասացել, որպեսզի Հոկտեմբերի 11-ին կոշեցիները զյուղապետ էղմոն Աղամյանի ղեկավարությամբ կազմակերպեն մի գեղեցիկ տոնախմբություն: Այն սկսվեց Կոշի պատմությանն ու ներկային վերաբերող երույթներով, շարունակվեց թատերականացած մատու (Տիրան արքայի մուտքը Կոշ և արդիական «Հրովարտակը») և «Ակոնք» ազգագրական Համոյիթի ողեղունչ Համերգով: Վերջում ներկաներին մատուցվեց մատադ:

Միջոցառումը Հաջողված էր իր չափ ու ձևով, Հայրենասիրական ու գաստիարակչական խորքով:



Մշակույթի և արվեստի գործիքներին, մուկովյան հիմնադրադրամ առաջատար Համոյիթների ղեկավային Համամենի արժեքները մեզ նորություն ու իմաստնարար փոխանցելու նպատակով Հույսին Հայրենիք ժամանեց Մոնթելայի «Գառնի» պարագային Համոյիթը: Հ. Պարույրանի անվան թատրոնի ինքնաշխատ դաշտում պարախումը Հանդիսատեսին ներկայացած Հազեցած ծրագիր-պարացանկով, որը կատարյալ տոնախմբություն էր:

«Գառնի» զեղարկվածության ղեկավարն է Հայաստանի պարագային Համոյիթը պարույրանի անվան թատրոնի ինքնաշխատ դաշտում... թե՛ գույնի կենսակինդ ունավորումները, թե՛ գույնի հրաշալի լուծումներով կատարողականությունը:

Նոյն ոգեշնչումը եղավ նաև Հայրենի հողի վրա: Համերգը այնքան Հաջողվեց, որ ճիշտ մուկովյանի նման, երեւանցի, ապա նաև հրաղդանցի Հանդիսատեսը դաշինից հեռանալ չէր ուղղում...

ԿԱՆԱՊԱՅԵՐԻ «ԳԱՈՒԻ» ՊԱՐԱՅԻ ՀԱՐԱՎԻ ՀԱՄՈՒՅԵՐԸ

ավելի երկրներում 600 երիտասարդ պարողների թևություն բերած, պետական մրցանակների արժանացած լյուդիլ Բուլղարյանը:

Կանադական պարողներին Հայաստան բերեն անհնարին կիններ առանց կազմակերպչի՝ եղիստահայի ու կարսեցու ծոոի, Հայաստանից 12 տարի առաջ Կանադա փոխադրված Աղատ Վարդանյանի հոգածության, որը Մոնթելայի ղեկավարում է ինֆորմատիվացիայի միջազ-



գային ակադեմիան և օտարության մեջ ապրող Հայության զերխնողիրը Համարում Հայապահապանումը: «Եթե մենք չօգնենք, ո՞վ պիտի օգնի» կարգախոսով առաջնորդվող Հայութին Հայապահապանումը իրականացնելու զորավոր միջոցներից մեկն է Համարում նման Համոյիթների ստեղծումը:

Գյուսավորապես Սուրբ Հակոբ վարժարանի սաներից ու շրջանավարտներից կազմված ոչ հիմնադրադր պարույրների «Գառնի» Համոյիթը Մովսես Խորենացու առիթն օգտագործելով «Ակոնքնականացած մատու» (Տիրան արքայի մուտքը Կոշ և արդիական «Հրովարտակը») և «Ակոնք» ազգագրական Համոյիթի ողեղունչ Համերգով: Վերջում ներկաներին մատուցվեց մատադ:

Հայրենական ծափողներու ամենագնահատելին են: Պարարկված Սուրբ Հակոբ գործիքների միությունը ղեկավարող Վանամիջրանը Հասցմունքով արտահայտեց իր բերկրանքը: Համերգից առաջ մտավախոսություն էր ունեցել շինի՞ թեմին պորտապար տեսների կամ ազգային պարը աղարսող օտարածին մանրամասն: Այնինչ տեսածը մարդու Հայկական պար էր:

Հայրենական գործիքներ ամենագնահատելին են: Պարարկված Սուրբ Հակոբ գործիքների միությունը ղեկավարող Վանամիջրանը Հասցմունքով արտահայտեց իր բերկրանքը: Համերգից առաջ մտավախոսություն էր ունեցել շինի՞ թեմին պորտապար տեսների կամ ազգային պարը աղարսող օտարածին մանրամասն: Այնինչ տեսածը մարդու Հայկական պար էր:

Հայրենական գործիքներ ամենագնահատելին են: Պարարկված Սուրբ Հակոբ գործիքների միությունը ղեկավարող Վանամիջրանը Հասցմունքով արտահայտեց իր բերկրանքը: Համերգից առաջ մտավախոսություն էր ունեցել շինի՞ թեմին պորտապար տեսների կամ ազգային պարը աղարսող օտարածին մանրամասն: Այնինչ տեսածը մարդու Հայկական պար էր:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՒՅՆԵՐԸ» ԲՈՒԼԱՐԴԻՑՈՒՄ



Հասմիկ ԿԱՐՊՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ազգային դասկերասահի
փոխնօտն

ՀՀ նախագահ Ռ. ԶՈՉԱՐՅԱՆԻ՝ Բովլարիայի Համբարձություն դասունական այցի կառակցությամբ Բովլարիայում Հայաստանի ճշակութային օրինի ցրանակներում կազմակերպվեց «Հայաստանի գույներ» խորագույն ցուցահանդեսը: Այն բացվեց Սոֆիայի ազգային գեղարվեսական դասկերասահին դասունակությամբ դասունական 1-10: Բացման արարությամբ շուրջ 300 հրավիրվածին մասնակցությամբ դասունական ելույթներով հանդիս եկան Բովլարիայի մշակույթի նախարար, Բովլարիայում Հայաստանի դեսպան Սեւանը, հյուրներուն դասկերասահին մասնակուր հինգ հեռուստակայաններ, լրատողներ:

Ազգային գեղարվեսական դասկերասահի նախկինում բազավիրական դավահանք դասական ինստիտուտում ընդունվել է ստեղծագործություն՝ 1910-1990-ական թվերի ընթացքին 39 ստեղծագործություն: Մարդու սարյանի, Գեղրի Յակովի, Վահրամ Գայֆեցյանի, Գարեգի Գյուրջյանի, Սեւրակ Ալաբեյյանի, Ալեքսանդր Բաժրենկ-Սելիյյանի, Զոսսոյի կտավներ հանդիսացան ցուցահանդեսի հիմնական առանցք՝ բացահայտելով 20-րդ դարի առաջին կեսի հայ գեղանկարչության ուղղվածությունը, ընդհանուր մեջ՝ յուրաքանչյուր իննաշերությունը, գումային լեզվի անկրկնելի երանգները:

Դանց հաջորդում է Խ. Խարեկյանի, Խ. Խայյանի, Ս. Շահմաջյանի, Դ. Կալենցի, Ք. Կակորյանի Հայաստանը դասկերող բնանկաները, Ք. Զարդարյանի եւ Պ. Կոնտուացանի դիմանկարչական աշխատանքները, Ա. Ղարիբյանի ուսագրական նայությունը, Գաղողի «Պոմոբյ», եւ «Երևառուի» կտավները: 1960-ականների սեռումը ներկայացնում է Խ. Ա. Ավետիսյանը, Լ. Բաժրենկ-Սելիյյանը, Ալ. Գրիգորյանը, Ա. Ջովհաննիսյանը, Ռ. Արյունը, Ք. Կակորյանը, Ո. Աղասյանը մեկական աշխատանկությունը: Դաջոր, այս ցուցահանդեսի կազմում ընդգրկված երրորդ սեռնի գեղանկարչներ՝ Ք. Էլիբեկյանի, Ս. Խարլամաջյանի, Վ. Շահնուրյանի, Ո. Էլիբեկյանի, Վ. Վարդանյանի, Փ. Միրզոյանի, Կ. Մկրտչյանի եւ այլոց աշխատանքները վար աղացոցըն էն գեղարվեսական ավանդույթների հաջորդականության եւ արդի հայ արվեստի ստեղծագործական դրսետրումների լայն սպեկտրի:

«Հայաստանի գույներ» ցուցահանդեսը մեծ հետաքրություն առաջացրեց բովլարացի, հայ (ընդ որում՝ նաև այլ խալաներից հատուկ ժամանակ) եւ այլազգի այցելուների ցրանում, որոնք բարձր գնահատելով հայ արվեստը, կարեւում էնան ցուցահանդեսների կազմակերպումը:

Ցուցահանդեսն ուղեկցվում էր բոլոր 39 աշխատանքների գումավոր վերաբերություններով եւ հեղինակների նախն սեղմ սեղեկություններ դարմակող, Երեանում հրաշարակված կատաղով (առաջարանը՝ Ի. Բաղրամյանի):

Մշակույթի օրերի գալա-համերգը նվիրված էր Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին: Յամերի դասական հյուսեն էն եկու եկրների նախագահները միկնանց հետ: Բովլարիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ, դիրիժոր Կոստանդին Օրբյանի դեկապարտյամբ իրենց անգուստական կատարմաներով դահլիճը գերեցին Արամ Խաչատրյանը, Սվետլանա Նավասարդյանը, Ուլիեն Ակարոնյանը: Ժողովրդական դաստիարակության մեջեղիների կատարումով հանդիս եկավ դրտուկահար Զիվան Գաստրյանը, որի մենահանգը տեղի ունեցավ հաջորդ օրը՝ սեղմերելով 8-ին՝ արժանայով լեփ-լեցուն դահլիճի բուն օվացիաների:

Տասմոյակի եւ մասնակրայիս «Հայաստանի գույներ» ցուցահանդեսի կազմակերպմանը մասնակցել եւ աջակցել են շատեր եւ Հայաստանում, եւ Բովլարիայում, որոնց հայտնում ենք մեր ընորհակալությունը: Առանձնահատուկ երախագիտությամբ ցանկանում ենք ներ Սեւան Սեւանի նվիրյալ աշխատանքը, որի ընորհիկ հաջորդությամբ կայացան Հայաստանի մշակույթի օրերը Բովլարիայում:

ՆԻԿՈԼ ԱՂԱԲԵՐՅԱՆ

Ծնվել է 1964 թ. հունվարի 28-ին, ՀՀ Տավուշի մարզի (Սոյեմբերյանի շրջան) Կողը գյուղում: 1986 թ. ավարտել է Երևանի մանկավարժական ինսիտուտի նկարչագործական ֆակուլտետը: Հայաստանի նկարչների միության անդամ է 1992 թվականից:

2003 թ. հունվարի 25-ին «Մոսկվա» կինոթատրոնի ճամասահում բացվեց նկարչի ուսագրավ ցուցահանդեսը:

ԿԹԻԱՏԱԿԱՆ ՑՈՒցԱՀԱՆԴԵՍՆԵՐ

- | | |
|---------------------------------|----------------------------------|
| 2002 թ. Ֆարնիսիա, Փարիզ | Ելեմա ցուցահանդես |
| 2002 թ. Հայաստան, Երևան | «Մոսկվա» կինոթատրոնի մենասահ |
| 2002 թ. Հայաստան, Կողը | Մշակույթի տուն |
| 2001 թ. Գեղմանիա, Զապյուս | «Պուտա» դասկերասահ |
| 2001 թ. Ֆարնիսիա, Ֆլայսկ | «Գայերի-83» դասկերասահ |
| 2001 թ. Ֆարնիսիա, Նիցցա | «Օդանավակայանի»-ի ցուցասրս |
| 2001 թ. Խայիա, Միլան | «Կազմա Արմենի» ցուցասրս |
| 2001 թ. Ֆարնիսիա, Փարիզ | «Ար ընդ ակտուալիտեն» դասկերասահ |
| 2001 թ. Ֆարնիսիա, Շայիս | «Մեզոն դե Ռեռահ» ցուցասրս |
| 2001 թ. Հայաստան, Երևան | Շուկի Թումանյանի տուն-թանգարան |
| 2001 թ. Ֆարնիսիա, Կանն | «Գրան Շեյ» դասկերասահ |
| 2001 թ. Ֆարնիսիա, Պուր լե Գայեր | «Պուր լե Գայեր» դասկերասահ |
| 2001 թ. Հայաստան, Երևան | Մշակույթի նախարարության ցուցասրս |
| 2000 թ. Ֆարնիսիա, Փարիզ | «Արհետն» դասկերասահ |
| 2000 թ. Ֆարնիսիա, Փարիզ | «Սիստ» դասկերասահ |
| 1999 թ. Հայաստան, Երևան | «Սիստ դե ար» դասկերասահ |
| 1998 թ. Հայաստան, Կողը | Մշակույթի տուն |
| 1997 թ. Ֆարնիսիա, Փարիզ | «Սիստ դե ար» դասկերասահ |
| 1996 թ. Ֆարնիսիա, Փարիզ | ՀՀ-ի նախարարության ցուցասրս |
| 1996 թ. Ֆարնիսիա, Լինու | «UGAB»-ի ցուցասրս |
| 1996 թ. Հայաստան, Նիցցա | Մարզային ցուցասրս |
| 1996 թ. Հայաստան, Շայետ | Ազգային դասկերասահ |
| 1996 թ. Հայաստան, Երևան | Սկարիչների միության ցուցասրս |
| 1994 թ. Սիրիա, Շայետ | «UGAB»-ի ցուցասրս |
| 1994 թ. Հայաստան, Երևան | Եր. Զոչարյանի տուն-թանգարան |
| 1993 թ. Հայաստան, Երևան | Սովայի տան ցուցասրս |
| 1992 թ. Արցախ, | Ազգային բարոյ |
| 1992 թ. Մարտիս, Շուշի | Ազգային բարոյ |
| 1990 թ. Հայաստան, Նոյեմբերյան | Մշակույթի տուն |
| 1987 թ. Հայաստան, Կողը | Մշակույթի տուն |
| 1986 թ. Հայաստան, Կողը | Մշակույթի տուն |

ՆԻԿՈԼ ԱՂԱԲԵՐՅԱՆ



Կողքի ծաղիկներ



Ո՞ր են գնում օրինը



Այ թեք բա՞ն

Փարվանայի իրացք



Սենա գետը



ՍՊԻՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Ծնվել է 1960 թ. Երևանում:

1975-79 թթ. սովորել է Փ. Թերյանեցանի անվ. գեղարվեսի ուսումնարանում:

1979-89 թթ. սովորել է Գեղարվեսա-թատրոնական հմտման դպրության մեջ՝ աշխատելով հետո վերադարձած է Լենինգրադի Գեղարվեսի ակադեմիայում:

1999-ից Հայաստանի Նկարչների միության անդամ է:
Դասավանդում է Փ. Թերյանեցանի անվ. գեղարվեսի ուսումնարանում:

Մասնակցել է բազմաթիվ ցուցահանությունների և սիմոռոշումների, գրադարձել նոնամետավաճառքային ցուցահանությունների:

Գեղինակ է բազմաթիվ հացողված նակարանդակների (քար, բրոնզ), որոնց նմուշները դահլիճ են Հայաստանի և արտասահմանան մի շաբաթ երկու օրուն:

Գեղինակի հետ կարելի է կարդ հաստատել:

հեռ. (374 1) 26 83 64

E-mail Archoss@mail.ru



Հայաստանում վեցին տարիներին ստեղծված գրուակցային կազմակերպությունների բազմության մեջ տահելանուրն առանձնանում է եռայս աշխատանքային փորձ ունեցող «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ՄՊԸ-ն, որի գործունեությունը կարելի է անվանել ոչ միայն գրուակցային, այլև կրթամշակութային:

«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» առաջարկում է գրուակցային փարերներ, որոնք մասնակիցներին հայաստանություն են տալիս ծանոթանալու հայաստանի և հայ ժողովրդի դասությանը, ավանդություններին ու վայելել հայ ժիշականի հյուսափորթյունն ու շերմուրժը, ցշագայել Արցախում և Արևմայն Հայաստանում:

Սակայն դրանց գուգահեռ իրականացվում են այլ հետաքրքրական ծագեր, որոնց մասին խարեցին դասնել գործակալության ժամանակաշրջանում նարինել պատարացած աշխատավայրին:

ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ

«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» գրուաշրջային ընկերության առաքելությունն է աշխարհին ներկայացնել Հայաստանի և Հայ ժողովրդի պատմությունը, մշակոյթը և ավանդույթները: «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» գրուաշրջային փաթեթները բազմարնույթ են, դրանք ընդգրկում են պատմամշակությունը, հնագիտական, երկրաբանական, թունագիտական, արևածային երթուղիները, որոնք նախատեսվում են ինչպես անհատների, այնպես էլ խմբերի համար:

Սակայն ընկերությունն առանձնահատուկ է իր երիտասարդական ծրագրերով, որոնք մշակել են հմուտ մանկավարժներն ու Հոգեբանները: Դրանց նպատակն է աջակցել կրթական բարեփոխումներին՝ մարդու առողջ, սուրով արթուն, բարեկիրթ հայորդի ձևավորելու գործին:

Մրցագրերից մնակը կրում է «ՃԱՆԱՋԻՐ ՀԱՅՐԵՆԻՔ», ՃԱՆԱՋԻՐ ԻՆՔԻ ՔԵԶ» խորագիրը: Այս ծրագրի շրջանակներում երիտասարդները շրջապատում են արշամների, բանականմների միջոցով գործիմաց գիղերի և հրաւանդիքների ուղեկցությամբ ուսումնասիրում են Հայաստանի պատմությունը, բնությունը, երկրաբանական և պատմական հուշարձանները:

«ՃԱՆԱՋԻՐ, ՊԱՀՊԱՆԵ՞Ր, ՊԱՀՊԱՆԵ՞Ր ԵՎ ՍԵՐՈՒՆԴ-ՆԵՐԻՆ ՓՈԽԱՆՑԵՆՔ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ» խորագիրն է կրում մրու ծրագիրը, որը Հաջողությամբ իրականացվում է արդեն երեք տարի: Մրցագրի շրջանակներում «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» կազմակերպում է տոնախմբություններ՝ նվիրված ազգային և եկեղեցական տոներին, ինչպիսիք են Վարդապար, Թարգմանչաց տոնը, Սարգարապատի Հերոսամարտը:

Այս ծրագրի նպատակն է մասնակիցներին ծանոթացնել ավանդույթների գաղափարական հենքին, արարողակարգին, տվյալ տոնին հատուկ կրթերին ու պարերին, ինչպես նաև կերպարատներին:

Վարդապատր երկու անգամ նշվել է Արթիկի շրջանի Հառիճավանքում և այս տարի Հադարձնի փանքում: Տոնի ծիսական մասը իրականացրել է ազգագրական երգի պարի «Նիգ» մանկական համոյթը՝ բանահավաք Ռուդիկ Հարոյանի ղեկավարությամբ:

Սուրբ Թարգմանչաց տոնը Հայ ժողովրդի՝ դպրության, կրթության, մշակույթի և նրանց երախտավորների նվատմանը ունեցած



վերաբերունքնի դրսեւորում է: «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» կազմակերպում է ուխտագնացություն դեպի Օշական՝ Մեարու Մաշտոցի գերեզման: Երիտասարդների համար այս տոնի առիթով ծավալվում են բննարկումներ Երևանի զարդարաներում, և առավել ակտիվ երեխանները պարզեատրվում են ոխտագնացությանը մասնակցելու ողեզրություն:

Սարգարապատի Հերոսամարտին նվիրված տոնախմբությանը մասնակցում են Հայաստանի բոլոր մարդկարի, Արցախի և Զավախիքի շորջ Հարյուր գաղոցականներ, որոնք երեք օր ապրելով Երևանում՝ այցելում են Սարգարապատ, Հնարավորություն և ունենում ծանոթագնությանը: Ավելի հզարամյակի շաբաթ գաղոցականների, զուգաւորությունների միջնորդը:

«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ընկերությունը սերտորեն համագործակցում է Երևանի պետական Համալսարանի ուսանողական ակումբների դաշնամության «Սախատակ» փրկարար ջոկատի, «Թոչնասերների կենտրոն», «Երիտասարդ էկորուսների միություն» Հասարակական կազմակերպությունների, «Այրումի» Հեծյա ակումբի հետ:

Հպարտությամբ պետք է նշեն, որ այս ծրագրերը երախտավորված են ՀՀ կրթության նախարարության, Երևանի բարգավաճառական և մշակոյթի վարչությունների կողմէց:

«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» առաջարկում է ցաջայության փաթեթը
Հայաստանի տեսարժան վայրերու

14օր/13 գիշեր արժեց՝ սկսած 535 ԱՄՆ դրամից (համարժեք դրամ)

Հայաստան - Արցախ

14օր/13 գիշեր արժեց՝ սկսած 585 ԱՄՆ դրամից (համարժեք դրամ)

Արևմայն Հայաստան - Հայաստան

14օր/ 13 գիշեր արժեց՝ սկսած 1475 ԱՄՆ դրամից (համարժեք դրամ)

ճամարդի ծաղկի Երևանարդների և դրանցականների համար

14օր/ 13 գիշեր արժեց՝ սկսած 420 ԱՄՆ դրամից (համարժեք դրամ)

«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ուսախ կյանի կազմակերպել են հանգիստ և ժամանաց

ՀԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՇ ՀԱՅ ԱՐՎԵՍՏ

Դիմե՛ք
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Եւ ԱՐՑԱԽՈՒՄ
«ՀԱՅԱԿԱՆ» գործակալությանը կամ
խմբագրություն,
ՍՓՅՈՒՌՈՒՄ հանդեսի լիազոր
ներկայացնեցիներին
ԱՄՆ, Նյու Յորք, Հայան ԱՐԾՈՒՄՆԻ
solopiano@hotmail.com
Լու Անժելիս, Տիգրան ԱՄԳՎԱՅԱՆ
tigrani@hotmail.com
Բոնոն, Արև ՂԱԶԱՐՅԱՆ
acf.hmh@verizon.net
ԱԿԱՏՐԱԼԻԱ, Մելքոն, Բիատիս ՍԱՆՈՒԿՅԱՆ
hye@hyeart.org
ԱՄԷ, Արև Դարի, Ամրականի ՂԱՐԱՅԱՆ
emcoraun@emirates.net.ae
ԹՈՒՐՔԻԱ, Մամբրուկ, Մուշեղ ՆԱԶԱՐՅԱՆ
yt8@duke.edu
ԻՐԱՆ, Թեհրան, Ալեքս ՋՈԶԱՐՅԱՆ
akocharian@hotmail.com
ԼԻԲԱՆԱՆ, Բեյրութ, Սովուն ՋԵՐԳԵԼՅԱՆ
noahsark@cyberia.net.lb
ԿԱՍՊՈՒ, Մելքոն, Սար ՄԱՆՈՒԿՅԱՆ
marom@videotron.ca
Տորոնտո, Սարգիս ՀԱՄԲՐՈՅԱՆ
shamboyan@hotmail.com
ՄԵԾ ԲԻՒՏԱՆԻԱ, Լոնդոն, Արուս ՕԾԱԿԱՆԻ
art@oshakantsi.com
ՈՒԽԱՍՏԱՆ, Սովուն, Իզաբելլա ՍԱՐԳՅԱՆ
Ասմեն Պետրոսյան, Առն ԽԱԶԱՐՅԱՆ
akhachents@yahoo.com
ՍԻՐԻԱ, Դամասկոս, Ամի ՖԻՉԵՆԿՅԱՆ
fishenkjianani@hotmail.com
ՎՐԱՍՏԱՆ, Թբիլիսի, Սարգիս ՂԱՐԵՆՅԱՆ
ՖՐԱՆՍԻԱ, Փարիզ, Էլոյ ՎԱՐԴԱՆՅԱՆ
eddavard@yahoo.com

«ՀԱՅ ԱՐՎԵՍՏ» լիսացոր ներկայացնեցիները կարող են ժողովում հեղինակներից նպարել ընդունել և ուղարկել խմբագրություն, իրավասու են զուգագնուիրումն ու համաշարժությունն և հանգունակցության պայմանավորվածությունները չենք պետք:

«ՀԱՅ ԱՐՎԵՍՏ» լիսացոր ներկայացնեցիները հանդեսի խմբագրական խորհրդի ընդունական կազմի լիիրավ սահմաններ են:

ՎԱԼՄԱՐ, գեղանկարչ, ով արվեստու քաղակիրում է, երաժեսությունը (սեղծազործական ճանապարհի արձագանքներ, հոլվաներ և նյութեր նկարչ մասին), խմբագիր՝ Նելլի Հաննազարյան, «Տիգրան Մեծ» հրա., Երևան, 2003:



ԱՍԼԻԿ ԳԵՂԱՐԳՅԱՆ, Վայոց ձորի եւ Ռուսական մանավակաջործությունը (13-17-րդ դդ.), «Զանգակ-97» հրա., Երևան, 2003:

ԹԵՎ ՊԱՍԼԱՎ, Ամերիկա, Ֆրանսերենից բարգավաճակ, Արևի Բոյացյան, «Սարգիս Խաչենց» հրա., Երևան, 2003:

ԴԱՎԻ. ԱՐԵԼ ԲԻՋ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հայ Եկեղեցին ժամանակի մարտահրանտերուն դիմաց, մընել, 2003:

«ՀԱՄԴԱ» հանդէս, իրավակութիւն Բ. Ե. Ազգ. ճեմարակի եջանաւարտից միութեան (Նալել), 2003:

• • • • •

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՍՈՒՐ

Դիմնադրման օրից «Հայ արվեստ» հանդեսի առաջնային նոյաբակներից է եղել մասնակցությունը Հայաստան-Ավստրիայի ճշակութային միանական ժողովական դաշտի ճեմավորմանը: Միջոցներից մեկը հայկական ինստրումենտի հասցեն տարածումն է, որը մենք կշարունակենք դարբերաբար:

Մատենադարան - հայ ճշակութային ժառանգության խուռագովն կենսուն
www.matenadaran.am

Հայաստանի Ազգային դասկերասահ - հայ գեղանկաջործության ամենամեծ հակածուն
www.gallery.am

Հայկական ազգային նախաձեռնություններ
www.armemory.narod.ru

«Հայ արվ» - հայկական ճշակութային կենսուն Ավանալիայում (Մելքոն)

www.hyedart.org

«Ճիրանի» - հայկական դասկերասահ Լիբանանում (Բեյրութ)
www.zirani.com

Հայ արվեստագետներ

Արուս Օօւականի (Մեծ Բիշամիա, Լոնդոն) • www.oshakantsi.com

Էլիզաբեթ Ռոմիլդ (Շայլան, Բանգլադեշ) • www.elizabethromhild.com

Տիգրան Սարգսյան (ԱՄՆ, Լու Անժելիս) • www.artbytigran.com



ՀԱՅ ԱՐՎԵՍՏ



Anna Hambaryan. The Sisters



Ashot Haroutounyan. The Musician



Yana Nersesova. The Virgin and Child



"Hayeli Hayastani"
panarmenian monthly magazine
carries a wide range of information about homeland to the Diaspora; from New York to Moscow, from Los Angeles to Beirut. Support us to circulate the "Hayeli" panarmenian and we shall all win! THE BASIS FOR ALL COOPERATION IS FAMILIARITY & TRUST

ԲՈԼՈՐ ՀԱՍՏԱԳՎԱԿԱՌՈՒԹԵՐՆԵՐԻ ՀԽՍՅ
ԾԱԽԾՈՒԹԻՒՆՆԵՐ Ե ՈՒ ԿԱՍԱՀՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայելի Հայաստան» համահայկական ամսագիրը՝ աշխարհագյուղ հայերի յուսակի կամուրջը, Հայաստան ներկայացնություն գաղութներին՝ Նիւ Շուկա, Լու Անժելսից մինչև Բեյրութ Մասնակիր «Հայելի» ՀԱՍՏԱՅԱԿԱՆՆԻ տարածմանը, կը շահեմ բոլոր

Phone: (3741) 555 744, 529 614

E-mail: hayeli@thisweek.am • www.thisweek.am

ԱՇԽՐԱԴԻԿ ՀԱՅՈՂՅԱՆ



Ծննդել են 1991 թ. հունիսի 3-ին

Նորվիկ:

Բժիշկ կաթիրնի է՝

«Արտասովու երեխանե»



Գոբեյն



Ի կախարդական մահից



Ի միացած մրգեր



Ի երազական տնակություն



Tvin. Dara. WIC



"Unusual babies"



Կողանակած երեխանե